

նեցել են խորանարդի ձև), այսինքն՝ քուէտրկում էին: Ի հարկէ, հետագայում խիճ-քուէով չէին քուէարկում, սակայն մնացել են սեւ քուէ եւ սպիտակ քուէ կապակցութիւնները՝ դէմ կամ կողմ նշանակութիւններով:

Քուրմ.- ասորերէն kūrma բառից փոխառեալ՝ քահանայ նշանակութեամբ (ՀԱԲ, 4, 596): Ըստ ՆՀԲ-ի՝ «չքահանայ՝ պաշտօնեայ կոոց» (ՆՀԲ, 2, 1013): Օրինակ՝ «...որք էին տոհմք եւ ազգք աշխարհակերք ժանտագործք քրմացն» (Քուզանդ, 6):

Բառը աւելի ուշ ձեռք է բերել փոխաբերական իմաստ՝ որեւէ բանի անձնութեամբ անուանուած անձ:

Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

1. Այս մասին ուշագրաւ տեղեկութիւններ է յայտնում Հ. Մարտիրոսեանը «Հայաստանը եւ աշխարհարարման մասին հնագոյն պատկերացումների ակունքները» յօդուածում (Աստուածաշնչական Հայաստան, Եր., 2005, էջ 53-63)՝ վկայակոչելով Եզեկիէի մարգարէութիւնը [Եզեկ. ԻԸ 13-16] եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի վկայութիւնները (Ղ. Ալիշան, Հայաստան առաջ քան զիհնէն Հայաստան, Վեներտիկ-Ս. Ղազար, 1904, էջ 11). Աս գտնում է, որ «...եղեմը Մեծ Հայքի տարածքն է»:
2. Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայ համաբարբառային գրականութիւնը եւ հայ մատենագրութեան համաբարբառը, «Էջմիածին», 1971, թիւ 11. Հ. Էսապալեան, «Հանդէս ամսօրեայ» 1935, էջ 571-596:
3. Ս. Եփրեմի Մատենագրութիւնը, հտ. Բ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1836, էջ 431:
4. Մ. Թրմանեան, Ազգասպասում, հտ. Ա, Ս. Էջմիածին-Վաղարշապատ, էջ 296:
5. Կանոնագիրք Հայոց, 1964, էջ 425-426:
6. Կ. Դալլաքեան, Նագովրեցի եւ յարակից հարցեր, ՊԲՀ, 2007, էջ 186-191:
7. Գ. Տաթևացի, Քարոզգիրք, Ամարան հատոր, 1741, էջ 572-573:
8. М. Фасмер, Этимологический словарь русского языка, М., том 3, 1987, ст. 633.

«Христианство» Энциклопедический словарь, М., 1995, ст. 573.

9. Գ. Տաթևացի, Առյճ տեղում, էջ 566:

10. ՔՀ հանրագիտարան, էջ 1055:

Հ Ա Ս Ա Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Ալիշան - Հ. Ղ. Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Եր., 2002 (արեւելահայերէնի վերածեց Վ. Գ. Բարսեղեանը):

ԱՀԲԲ - Է. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հտ. 1-2, Եր., 1976-1978:

ԲՍԳ - Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

Բուզանդ - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզեկի - Եզեկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վեներտիկ-Ս. Ղազար, 1826:

Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի, Եր., 1957:

Խորենացի - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիփլիս, 1913:

ՀԱ - Հանդէս ամսօրեայ:

ՀԱԲ - Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. 1-4, Եր., 1971-1979:

ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944-1945:

ՀԼՊ - Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. 1-2, 1940-1951:

ՀՀԲ - Բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1749:

Մեղրեցի - Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Եր., 1975:

Յովհաննիսեան - Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառապաշարը (Ե դար), Եր., 2006:

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1836-1837:

Ջահուկեան - Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Անխագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդէս:

ՔՀ - Քրիստոնէայ Հայաստան (հանրագիտարան), Եր., 2002:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԱՐԻՍՏՈՆ ՓԵՂՂԱՑԻ

Գեորգ Սադոյեան

Մեզ հասած Գողթան երգերը իրենց փոքր ծաւալի մէջ հետազօտութեան համար մեծ նիւթ են պարունակում: Բացի գրական-բանաստեղծական հայերէն հնագոյն պատառիկները լինելուց, Գողթան երգերը անփոխարինելի են զրաբար ու բանահիւսութիւն, հայոց մշակոյթ ու պատմութիւն ուսումնասիրողների համար:

Հետաքրքրական է, որ Մովսէս Խորենացու աւանդած հատուածների հիմնական մասը Արտաշէս արքայի վէպից է¹, ինչից կարող ենք եզրակացնել, որ՝

ա. կա՛մ Խորենացին քաջածանօթ է եղել յատկապէս այս վէպին,

բ. կա՛մ յիշեալ երգերը սրտամօտ են եղել Քերթովհազօրը, որ առաւելաբար սրանք է մէջբերել՝ միւսներն աչքաթող անելով:

Խօսքը ա. եւ բ. կէտերում կառուցեցինք կամ-ով, չնայած երկուսը կարող են իրար չհակասել եւ անգամ միաւորուել՝ Խորենացուն քաջածանօթ եւ սրտամօտ են եղել Արտաշէսի երգերը: Յատկապէս Տորք Անգեղի եւ պարսից առասպելների մասին

խօսելիս Խորենացին բացայայտօրէն ցոյց է տալիս իր ճաշակը եւ նիւթն ընտրելու սկզբունքները: Պարզ է, որ Արտաշէսի երգերը գրքում տեղ չէին գտնի, եթէ չլինէր Խորենացու համապատասխան վերաբերմունքը: Նոյնի օգտին է Պատմութեան Ա. գրքի հետեւեալ հատուածը. «Յայտնեն զայս ճշմարտապէս² եւ թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ գաւառին Գողթան. յորս շարին բանք երգոցն զԱրտաշէսէ եւ զորդուց նորա...»³:

Ընդհանրապէս Արտաշէսի պատմութիւնը շարադրելիս Խորենացին երեք հիմնական աղբիւր է օգտագործում. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանույ, գրող մեհենական պատմութեանց, եւ զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում եւ Պարսից մատենանքն վկայեն⁴ եւ Հայոց երգք վիպասանաց»⁵: Եւ միայն Արտաշէսի մասին պատմութիւնների վերջում Խորենացին յիշում է մի նոր աղբիւր՝ Արիստոն Փեղղացուն. «Քեղեցիկ իմն պատմէ եւ Արիստոն Փեղղացի յաղազս մահուանն Արտաշէսի: ...Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբ Ասորեստանի. եւ մերոյն Արտաշէսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ

1 Բացառութիւն են Վահագն Վիշապաքաղի եւ Վարդգէս Մանկան երգերը: Կարելի է կարծել, որ Վարդգէսին առնչուող տողերը կարող էին յարակցուած լինել Արտաշէսի վէպին: Իսկ աւելի հաւանական է, որ եղել է Հայոց արքաների գուսանական մի պատմութիւն, ուր պատշաճ հերթականութեամբ պիտի հանդէս գային բոլոր երեւելի դէմքերը: Չէ՞ որ գուսան-գովասանի (այս բառի համար տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Դ, Եր., 1979, էջ 629-630) բուն գործը հէնց այդ էր՝ մտել պալատում եւ երգել թագաւորի գովքը: Ըստ էութեան՝ պէտք է ընդունել, որ Գողթան գուսանի գուսանները, փաստօրէն, այդ պալատական երգիչ-բանաստեղծներն էին:

2 Այս ճշմարտապէս եւ յաջորդ հատուածում հանդիպող ստուգապէս արտայայտութիւնները մատուցում են, որ Պատմագիր օգտագործած աղբիւրները նոյնական են եղել, եւ Խորենացին դրանք մանրամասնութեամբ համեմատել է:

3 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիփլիս, 1913, էջ 84

4 Չենք կարող չընդունել բուն գիւթից եւ չնկատել, որ Խորենացին հաւանօրէն տիրապետել է նաեւ պարսկերէնին:

5 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 176

իւրովք զիւզոստատօք. զորոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւն ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարս, ի Սոհունդ անուանեալ տեղւոջ»⁶:

Նախ՝ ով էր Փեղղացի Արիստոնը: Ըստ Միքայէլ Չամչեանցի՝ «էր անդ առաջիկայ քարտուղարն Արիստոն Փեղղացի յերկրէն ասորոց. զոր յիշէ եւ Եւսեբիոս [Պատմ. Եկեղ. Դ 6]. որոյ եւ տեսեալ զԱրտաշէս ի հիւանդութեան, եւս եւ զմահ նորա եւ զհանդէս թաղման նորին, գրեաց զայնմանէ իբրեւ ականատես. յորմէ առեալ գրէ եւ խորենացին»⁷: Ստեփանոս Մալխասեանցը բաւարարուում է՝ այլոց կարծիքները համադրելով. «Ըստ էմինի՝ Փելլան քաղաք էր Հրէաստանում Յորդանան գետից դէպի արեւելք ընկած, որտեղ ժողովուցին հրեաները Երուսաղէմի կործանումից յետոյ: Արիստոնը ապրում էր Ա դարի վերջերին եւ Բ դարի սկզբներին: Նա գրել է Հրեաների ապստամբութեան պատմութիւնը Բարքոբայի առաջնորդութեամբ: Նրանից է քաղում Եւսեբիոսը իր պատմութիւնը ապստամբութեան մասին, եւ խորենացին առնում է Եւսեբիոսից: Գալով Արիստոնի ուղեկցելուն Արտաշէս թագաւորին եւ նրա մահն ու թաղումը նկարագրելուն՝ պէտք է նշենք, որ սրանք ուրիշ տեղից յայտնի չեն: Արտաշէսի շքեղ թաղման նկարագրութիւնը շատ նման է Հերովդէս թագաւորի թաղման նկարագրութեանը՝ ըստ Յովսեպոսի (Խալաթեանց, Յոս, էջ 310)»⁸: Այսինքն՝ Արիստոնը Եւսեբիոսի սկզբնաղբիւրն է, որի վրայ հիմնուելով՝ խորենացին պատմում է Արտաշէսի մահն ու թաղումը: Բայց արդեօ՞ք զուտ արիստոնեան նիւթն է գործածել Պատմահայրը խնդրոյ առարկայ գլխում: Անշուշտ ոչ... Վերելում նշուեց, որ գիտական սկզբունքայնութեամբ թուարկուում էին «Ողիւմպ քուրմը, Պարսից մատեանները եւ Հայոց վիպասանական երգերը», ուրեմն ինչո՞ւ պիտի արքայի մահն ու թաղումը պատմուէր՝ միայն մէկ աղբիւրի վրայ հիմնուելով: Այս պարագայում տեղին է յիշել Արիստոնին վերաբերող խորենացու նախնական միտքը. «Գեղեցիկ իմն պատմէ եւ Արիստոն Փեղղացի...»: Ինչպէ՞ս ենք հասկանում (իմա՝ թարգմանում) ընդգծուած կապակցութիւնը: Խորէն Ստեփանէի թարգմանութիւնը հետեւեալն է. «Գեղեցիկ կերպով է պատմում Արիստոն Փեղղացին...»⁹: Մալխասեանցի տարբերակում կարողում ենք. «Գեղեցիկ ձեւով է պատմում եւ Արիստոն Փեղղացին...»¹⁰: Ակնբերել է, որ Ստեփանէն «կնճռոտ» եւ՝ պարզապէս դուրս է գցել, եւ առաւել ընդունելին Մալխասեանցի թարգմանութիւնն է: Լաւագոյն մօտեցումը կը լինի Մալխասեանցի տարբերակում եւ՝ փոխարինել նաեւ՝ «Գեղեցիկ բան»¹¹ է պատմում նաեւ Արիստոն Փեղղացին»: Եւ կարող ենք համոզուել, որ Արտաշէսի մահը խորենացին ոչ թէ միայն Արիստոնից է քաղում, այլ մի նոր՝ արիստոնեան աղբիւր է աւելացնում Հայոց արքայի կապակցութեամբ մատնանշուած երեք աղբիւրներին¹²:

9 Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւն, աշխարհաբար թարգմ. եւ լուսաբանեց Խորէն եպս. Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 159
10 Տե՛ս Ստ. Մալխասեանցի յիշեալ թարգմանութեան 192-րդ էջը:
11 Իմն բառի համար տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 1, Եր., 1979. հմմտ. Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1865:
12 Իրականում, Արիստոնի անձը ւաւել շատ իրարից ծագող հարցեր է առաջացնում, քան տալիս է պատասխաններ: Օրինակ՝ Ի՞նչ է, միգչել Արիստոնի յայտնուելը Հայոց արքան քարտուղար

6 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 190
7 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Գիրք Երկրորդ, գլ. ԻԹ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1784, էջ 350
8 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, թարգմ. ներած. եւ ծանօթ. Ստ. Մալխասեանցի, Եր., 1968, էջ 353

Եւ վերջապէս, Եւսեբիոս Կեսարացու Պատմութիւն Եկեղեցույի Չորրորդ դարութեան Զ գլուխը (որ յիշատակում է նաեւ Չամչեանցը), ուր գրքում միակ անգամ տրուած է Արիստոն Փեղղացու անունը, Հայքի եւ առաւել եւս Արտաշէս թագաւորի հետ կապ չունի¹³: Արտաշէս անունը Եւսեբիոսը գրքում մէկ անգամ է կիրառել, այն էլ՝ Պարսից արքայի կապակցութեամբ, ասել կ'ուզէ՝ Հայոց Արտաշէս արքայի թաղման տեսարանը եւ Արիստոն Փեղղացին իրար հետ կապ ունեն, ու խորենացու մօտ հանդիպում են միեւնոյն գլխում:

Անդրադառնանք Արտաշէսի թաղմանը, որ իրօք գեղեցիկ մի տեսարան է: «(Ա.) Եւ գրէ [Արիստոն], եթէ ո՛րչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք: Եւ ո՛րպիսի շուք բազմադիմիս արարին՝ առ ի պատիւ դիոյն, քաղաքականաց կարգօք եւ ոչ որպէս զբարբարոսս: (Բ.) Դազաղքն էին,՝ ասէ,՝ ոսկեղէնք, դահոյքն եւ անկողինքն բեհեգեայ. եւ պատմուածանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, եւ գէնն ոսկով առաջի եղեալ. եւ զգահոյիւքն շուրջ՝ որդիքն եւ բազմութիւն ազգականացն, եւ առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, եւ

զկնի կուսանք ձայնարկուք սեւազգեստք եւ աշխարող կանայք, եւ զհետ՝ բազմութիւն ուամկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահուանք, որպէս վերագոյնն ասացաք: Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն եւ մի»:

Մէջբերումը, որ պայմանականօրէն Ա. եւ Բ. մասերի ենք բաժանել, այնքան էլ միատարր չէ: Դիտելի է, որ առաջին մասում խորենացին իր բառերով վերապատմում է՝ «...գրէ, եթէ...», մինչդեռ երկրորդում խօսքը բառացի է քաղուած, եւ պէտք է բնագրում կէտադրական ճշտում անել, որ զգացուի ուրիշ ուղղակի խօսքի առկայութիւնը¹⁴. «Դազաղքն էին,՝ ասէ,՝ ոսկեղէնք... եւ զհետ՝ բազմութիւն ուամկին»: Այն, ինչ առաջին մասում ներկայացուում է ընդհանուր գծերով, երկրորդ մասում տրուում է մանրամասն նկարագրութեամբ եւ պատկերաւոր կերպով, մինչեւ որ հասցուում է միեւնոյն կէտին՝ կամաւոր զոհերի մատուցմանը՝

(Ա.) ո՛րչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք. (Բ.) Եւ շուրջ զգերեզմութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք.

Եւ Պատմահայրն արձանագրում է խօսքի կրկնութիւնը՝ «որպէս վերագոյնն ասացաք»: Ինչո՞ւ պիտի մի փոքրիկ պարբերութեան մէջ նոյն բանը կրկնուէր: Մեր բացատրութիւնն այն է, որ մի աղբիւրը ներկայացնելուց յետոյ Պատմիչն անցել է նոյն դէպքերի նկարագրութեանը՝ ըստ միւս աղբիւրի: Առաջին դէպքում խորենացին կարեւոր է համարել, որ օտար պատմիչը Հայոց արքայի թաղման ծէսը բնու-

չումէ՞ր, թէ՞ Արիստոնի ներկայութիւնն անհրաժեշտ էր հոռոմայեցիների հետ շփումը դիւրացնելու համար: Ասել կ'ուզէ՝ Հայոց արքունիքում լեզուների տիրապետող պալատական լիւր: Իսկ այդ դէպքում Արիստոնն ինքը ի՞նչ լեզուով էր հարկողակցում հայերի հետ, թէ՞ ինքն էլ իր թարգման-քարտուղարն ունէր... եւ:
13 Տե՛ս Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեցույի յեղեալ յատորոյն ի հայ ի հիմագերորդ դարու, պարզաբանեալ մոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն, ի ձեռն Հ. Արաբիան վրդ. Մարեան, Վեներտիկ-Ս. Ղազար, 1877, էջ 244-245:

14 Ցայսօր ոչ մի գրքում հատուածը մէջբերում չի համարուել:

Թագրում է իբրև «քաղաքականաց կարգօք եւ ոչ որպէս զբարբարոսս», երկրորդ դէպքում կարեւոր է ակնատեսի վկայութիւնը, որ իր գեղարուեստականութեան պատճառով պիտի դրդէր բառացի ընդօրինակելու:

Հիմա անդրադառնանք գրէ եւ ասէ բայերին, որ զանազանութիւն են մտցնում սկզբնաղբերները միջեւ: Անվիճելի է, որ գրէ-ն, այսինքն՝ առաջին մասը, վերաբերում է Արիստոնին: Իսկ ի՞նչ աղբիւր է թաքցնում ասէ-ն: Արդեօ՞ք եզակի բայածեւը պարտադրում է միայն Ողիւմպին հասկանալ, քանի որ Պարսից մատենագետը եւ մեր Երգերը յոգնակի թուով են: Պարսկական աղբիւրների մասին խորհնացու մօտ համապատասխան օրինակ չկայ: Իսկ Գողթան երգերի կապակցութեամբ կարեւոր է հետեւեալ օրինակը. «Ճաշ,- ասեն,- գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, եւ խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց»: Այլ եւ՝ «Արտաւազդայ ոչ գտեալ,- ասեն,- քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց,- ասէ,- գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ»¹⁵, ուր երկու յոգնակի ասեն ձեւերից յետոյ գալիս է ասէ բայը՝ հաստատելով, որ ասում են [երգերը կամ երգիչները] կառոյցը պարտադիր չէ, կարող է լինել նաեւ ասում է [երգը] ձեւով:

Այլ հարցադրում. ի՞նչ աղբիւր կ'օգտագործէր խորհնացին Հայոց արքայի թաղումը նկարագրելիս: Կը թարգմանէ՞ր օտարի պատմածը, թէ՞ կը վերցնէր երգիչ-բանաստեղծների պատրաստի յօրինածը, թէ՞ ինչպէս աշխատել ենք ընդգծել վերելում, սրտամօտ եւ քաջածանօթ էր իրեն:

Այս անգամ, փաստարկ բերելու փոխարէն, փորձենք դիտարկուող հատուածը կարդալ այսպէս.

Դագաղքն էին ոսկեղէնք,
Գահոյքն եւ անկողիքն բեհեզեայ.
Եւ պատմունանն որ զմարմնովն՝ ոսկեթել.
Թագ կապեալ ի գլուխն,
Եւ զէնն ոսկով առաջի եղեալ.
Եւ զգահոյիքն շուրջ՝ որդիքն
Եւ բազմութիւն ազգականացն,
Եւ առ այսոքիք պաշտօնէիցն զհնուրութիւնք,
Եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք

Եւ միանգամայն զօրականացն վաշտք,
Ամենեքին կազմեալ զինու հանդերձ,
Իբր թէ ի պատերազմ ճակատիցին.
Եւ առաջի պղնձիս հարկանելով փողս,
Եւ զկնի կուսանք ձայնարկուք սեւագետք
Եւ աշխարող կանայք,
Եւ զհետ՝ բազմութիւն ոսակին:

Լեզուաոճական առումով առաջինը աչքի է ընկնում այն հանգամանքը, որ ընդամէնը երկու դիմաւոր ձեւ ունենք՝ «Դագաղքն էին ոսկեղէնք... Իբր թէ ի պատերազմ ճակատիցին», իսկ մնացեալ շարադրանքը կազմուած է դերբայներով՝ «Թագ կապեալ ի գլուխն, եւ զէնն ոսկով առաջի եղեալ... Եւ առաջի պղինձս հարկանելով փողս»: Այսինքն՝ 1 դիմաւոր ձեւ + 1 անցեալ դերբայ + 1 անցեալ դերբայ + 1 դիմաւոր ձեւ + 1 անորոշի գործիական հոլովածեւ: Քերականական ճիշտ նոյն հերթականութեանը հանդիպում ենք Սաթենիկին փախցնելու տեսարանում՝ «Հեծաւ + հանեալ + անցեալ + ընկեց + հասուցանելով»:

Ընդհանրապէս դասական հայերէնին եւ մասնաւորաբար՝ Գողթան երգերին

15 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 84

ընորոշ են անցեալ դերբայով կազմուած նախադասութիւն-կիսանախադասութիւնները¹⁶, ուր բնականօրէն հանդէս են գալիս նաեւ սեռականով ենթակայ անուանուած ձեւերը, ինչպէս՝ «Ճաշ գործեալ Արգաւանայ...», կամ՝ «Արտաւազդայ ոչ գտեալ...»: Այլ օրինակ է Վարդգէսի պատահիկը՝ «Հատուած գնացեալ...»: Այսինքն՝ վստահաբար կարող ենք արձանագրել, որ խօսքի կառուցման այս եղանակը յատուկ է մեր հնրերին: Հարց է առաջանում. հնարաւոր էր թարգմանել այնպէս, որ խօսքը հնչէր ընդունող լեզուին հարազատ: Այո, սակայն այլ բան է բացառում. անհնար է, որ թարգմանութեան մէջ թրծուած խորհնացին բայի դիմաւոր ձեւերը փոխարինէր անդէմներով եւ հակասէր թարգմանական արուեստի ժամանակին ընդունուած սկզբունքներին: Իբրև օրինակ՝ նայենք Աբիւղենոսից արուած մէջբերումներին, որ խորհնացու մօտ հանդիպող բառացիօրէն քաղուած առաջին թարգմանական կտորներն են. «Եւ զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ եւ առաջնորդ ժողովրդեանն» (եւ ոչ թէ՛ ցուցեալ) եւ «Թագաւորեաց Աղովրոս շարս տասն» (եւ ոչ՝ Թագաւորեալ Աղովրայ)¹⁷: Այս վերջինին հարկ է համադրել քննութեան առարկայ պարբերութեան վերջին տողը. «Եւ սորա [Արտաշիսի] այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն եւ մի»: Եւ բացայայտ երեւում է, թէ ինչպէս է հնչում նոյն միտքը (լոկ թագաւորներն են տարբեր) թարգմանութեան, իսկ այնուհետեւ ինքնուրոյն շարադրանքի դէպքում:

Այսպիսով, հարկ է ընդունել, որ Արտաշէսի թաղման տեսարանը ոչ թէ թարգմանութեամբ ստացուած խօսք է, այլ հէնց հայերէնով յօրինուած, այսինքն՝ փոխադրուած է Արիստոնից: Սրանից յետոյ հարկ է յիշել Քերթողազօր՝ Արտաշէսի ժամանակաշրջանի նկարագրութեան մնացեալ երեք աղբիւրները, ու կը տեսնենք, որ միայն Գողթան երգերն էին, որ կարող էին հայերէնով շարադրուած պատկերաւոր նիւթ տրամադրել: Այսինքն՝ գործ ունենք երգերի հետ: Եւ այժմ կարելի է անդրադառնալ տողատման հանգամանքներին¹⁸: Առաջին հարցը. ինչո՞ւ ենք երգը համարում աւարտուած եւ զհետ՝ բազմութիւն ուսկի՞ն տողով եւ ոչ՝ Եւ այսպէս տարեալ թաղեցին-ով: Պատճառն այն է, որ ամբողջ շարադրանքը միասնական նախադասութիւն է՝ 16 տող, որի բնական շարունակութիւնը պիտի լինէր ծաւալով իրեն համարժէք մի կառոյց եւ ոչ թէ ընդամէնը մի տող: Այս սկզբունքով են գրուած բոլոր Գողթան երգերը: Բոլորը կազմուած են մէկ, երբեմն երկարաշունչ նախադասութիւնից, եւ միայն Վահագնի ծնունդն է երեք նախադասութեամբ: Այսինքն՝ եթէ Եւ այսպէս տարեալ թաղեցին-ը ընդհանուրի մաս կազմէր, ձեռագրերում էլ տրոհուի վերջակէտով, այլ կը դրուէր միջակէտ՝ կէտադրական նշան, որ հնում առանց տողատման գրուած բանաստեղծութիւններում լայնօրէն կիրառուած էր՝ ցոյց տալով տողերի բաժանումը: Մեր պարագայում 2, 3, 5, 12-րդ տողերը հէնց այս նշանով են տրոհուած: Հետեւել ենք նաեւ ստորակէտերին 1, 4, 7, 8, 10, 11, 13, 15-րդ տողերը բաժանելիս: Մեր հին բանաստեղծութեան մէջ տարածուած միւս օրինաչափութիւնը տո-

16 Այսօրուայ տեսանկիւնից թերեւս ճիշտ է այսպէս անուանել ստորոգում չունեցող կառոյցները:
17 Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 13: Նմանատիպ հատուածներ, ուր հաստատապէս գործ ունենք թարգմանութեան հետ, կարելի է տեսնել էջ 16, 21, 23, 24 եւն:

18 Գողթան երգերի տողատման կապակցութեամբ հետաքրքրական է Սէլյանի առաջարկը, որ բերում է խորէն Ստեփանէն. տե՛ս Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւն, աշխարհաբար թարգմ. եւ լուսարանեց Խորէն եպս. Ստեփանէ, էջ 390, ծմթ. 170-րդ:

դերը եւ-երով սկսելն է¹⁹, որ մեր օրինակում նկատելի է 3, 5, 6, 7, 8, 9, 10, 13, 14, 15, 16-րդ տողերում, որ բացառութեամբ 6, 9 եւ 14-րդի, համընկնում են միջակէտերի եւ ստորակէտերի առաջադրած բաժանումներին: Եթէ սրան յաւելենք, որ իւրաքանչիւր տող բաժանում է միւսներից նաեւ իմաստային-տրամաբանական առումով, ապա կը տեսնենք, որ տողատումը միանգամայն ընդունելի է:

Ասուածն ի մի բերելով՝ կարող ենք վստահաբար պնդել, որ Պատմահայր Մովսէս Խորենացու Պատմութեան Բ. գրքի 4. գլխում հանդիպող հատուածն առնուած է Հայոց Հին վէպից եւ տողատուած վիճակում ունի վերելում ներկայացուած տեսքը: Չէինք կամենայ որեւէ գնահատական տալ այս տասնվեցտողեայ բանաստեղծութեանը, որովհետեւ անկարելի է գովերգել ոսկին կամ թանկարժէք ակնեղէնը. բաւարար է ասել, որ սա Գողթան երգ է, Գողթան մասունք:

ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ՝ ԸՍՏ ՅՈՅՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ (ՀԵԿԱՏԷՈՍ - ՀԵՐՈԴՈՏՈՍ - ՔՍԵՆՈՓՈՆ)

Յակոբ Յարութիւնեան

Ք.ա. VI դարի սկզբներին (մօտ 580-ական թթ.), ըստ գրականութեան մէջ արմատաւորուած տեսակէտի, կործանուեց Ուրարտուի թագաւորութիւնը եւ նրա տեղում աւարտուեց Երուանդունիների համահայկական առաջին պետութեան ձեւաւորումը: Այս պետականութեան պատմութեան ուսումնասիրութեան համար առաջնահերթ նշանակութիւն ունեն յոյն մատենագիրների երկերում պահպանուած վկայութիւնները, առաջին հերթին՝ Հեկատէոս Միլեթացու, Հերոդոտոսի եւ Քսենոփոնի, որոնք ապրել են այդ ժամանակաշրջանում: Ինչպէս ցոյց են տալիս նրանց հաղորդած տուեալները, հէնց նրանց օրօք էլ առաջին անգամ իրականացուել է հայկական բոլոր տարածքների միաւորումն այս պետականութեան սահմաններում: Մինչեւ Երուանդունիները երկրի տարբեր շրջաններում, յատկապէս՝ հեռաւոր ծայրամասերում տեղի կառավարիչներն իրենց հռչակել էին անկախ՝ վարելով կենտրոնախոյս քաղաքականութիւն: Պարոյր Սկայորդին, որին Մովսէս Խորենացին համարում է առաջին Հայոց արքան, չի կարողանում իր տիրապետութիւնը հաստատել ողջ հայկական լեռնաշխարհի վրայ, որը նախկինում պատկանել էր Ուրարտուի թագաւորներին¹: Երկրում ստեղծուած իրավիճակի կապակցութեամբ Ս. Տ. Երեմեանը գրում է. «Այսպիսով, Արմէ-Շուպրիայում Ք.ա. 652-612 թուականների ժամանակահատուածում թագաւորում է Հայ-սկիւթական ծա-

գում ունեցող ցեղապետ Պարոյրը, իսկ Բիայնիլիում VI դարի սկզբներին իշխանութեան գլուխ է անցնում հայկական Երուանդունի տոհմը: Այնուհետեւ Արմէ-Շուպրիան եւ Բիայնիլին միաւորուած են եւ կազմում մի ընդարձակ Հայկական թագաւորութիւն, որը Հայերի մէջ կոչուեց Հայք, իսկ հարեւանների մէջ՝ Արմինա, Արմէնիա»²: Եթէ Ուրարտուի օրօք միասնական պետութեան գերիշխանութիւնը տարածուած էր հայկական ողջ լեռնաշխարհի վրայ, որի մեծագոյն մասը հետագայում, Երուանդունիների օրօք, ստացաւ Մեծ Հայք անուանումը, ապա այս երկուսի միջեւ ընկած ժամանակահատուածում, Ք.ա. 580-570-ական թթ., այստեղ բնակուող ցեղերի մեծ մասն իրեն անկախ էր հռչակել³: Բնականաբար ծագում է այն հարցը, թէ ինչով էր պայմանաւորուած այդ անջատուածութիւնը: Առաջին շրջանում դա արդիւնք էր ինչպէս միասնական սոցիալ-տնտեսական բազայի, այնպէս էլ հայկական կոյնէի բացակայութեան⁴:

19 Հմմտ., օրինակ, Սաթեմիկին փայցնելու տեսարանը:

1 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քնն. քննադիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Սարգսեանի, Եր., 1991, Ա, իս, իր:

2 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. I, Հայաստանը նախնադարեան-Քամայնական եւ ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. Ս. Տ. Երեմեանի, Եր., 1971, էջ 438

3 Այս փաստի օգտին է խօսում ներկայումս յայտնաբերուած ուրարտական արձանագրութիւնների «աշխարհագրութիւնը», որոնք գտել են Մեյլիդ-Մալաթիայից մինչեւ Կասպից ծովի արեւմտեան ափերն ընկած տարածքներում: Աւելի մանրամասն տե՛ս Գ. Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960, passim; Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, passim:

4 Առաջացած տոհմա-լեզուային իրադրութեան կապակցութեամբ մանրամասն տե՛ս Ի. Մ.